«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

22 հունիսի, 2022 թ. N 19 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 59-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25–րդ հոդվածի 4-րդ մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 4-րդ մասը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 5.1.1 (6) կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Պալատի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-L որոշման հավելվածի 2-րդ բաժնի 2.6 կետից հանել հետևյալ բառակապակցությունը «բացառությամբ «ՀՀ հարկային օրենսդրություն» և «Իրավագիտության հիմունքներ» առարկաների»:

2. Պալատի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-L որոշման հավելված 1-ի Պալատի որակավորման քննությունների ծրագրի առարկաների ցուցակում «Ֆինանսական տեղեկատվության կառավարման համար» առարկայի անվանումից հետո ավելացնել «Իրավագիտության հիմունքներ» և «ՀՀ հարկային օրենսդրություն» առարկաների անվանումները, իսկ համարժեք համարվող ACCA-ի որակավորման քննությունների ծրագրի առարկաների ցանկում «Management Accounting (MA)» առարկայի անվանումից հետո ավելացնել «Corporate and Business Law» և «Taxation» առարկաների անվանումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**